ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2024

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, պատասխանների ձևաթուղթը: Առաջադրանքների կազմման համար որպես հիմք են ընդունվել «Աշխարհագրություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում առկա են «Աշխարհագրություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրի բոլոր բաժինները և

- ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին,
- աշխարհագրական թաղանթ,
- մայրցամաքներ և օվկիանոսներ,
- հասարակական աշխարհագրություն,
- տարածաշրջաններ և երկրներ,
- Հայաստանի աշխարհագրություն,
- բնություն-հասարակություն փոխհարաբերություններ,
- մարդկության համամոլորակային հիմնախնդիրներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կառուցվածքային առումով առաջադրանքները երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և խնդիրներ:

Կարճ պատասխանով առաջադրանքները որոշակիորեն նման են ընտրովի պատասխանով առաջադրանքներին, սակայն դրանք լրացնելու համար անհրաժեշտ է նշել բոլոր ճիշտ պատասխանները, որոնք կարող են լինել մինչև 4 հատ՝ 7 հատից:

Խնդիրների համար պահանջվում է գրել համապատասխան թիվը՝ առանց չափման միավորների, բացատների: Բացի թվից չդնե՛լ որևէ նշան (վերջակետ, ստորակետ և այլն):

Ժամային հաշվարկ պահանջող խնդիրներում կլոր ժամ ստանալու դեպքում թիվը գրել առանց 00-ների, րոպեով ժամ ստանալու դեպքում րոպեների թիվը գրել ժամին կպած՝ առանց բացատի կամ այլ նշանի:

ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը:

Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշում կատարել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ պատասխաններին համապատասխանող վանդակներում: ***Չի կարելի կատարել*** ճիշտ պատասխանների քանակից ավելի նշում: Ցանկացած ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1,2 կամ 3 նշումներ: Խնդիրների համար պահանջվում է գրել համապատասխան թիվը՝ առանց չափման միավորների,բացատների: Բացի թվից չդնե՛լ որևէ նշան (վերջակետ, ստորակետ և այլն):

Ժամային հաշվարկ պահանջող խնդիրներում կլոր ժամ ստանալու դեպքում թիվը գրել առանց 00-ների, րոպեով ժամ ստանալու դեպքում րոպեների թիվը գրել ժամին կպած՝ առանց բացատի կամ այլ նշանի: